առաջին ճգնաժամը և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի երկրորդ ճգնաժամը պետք է դիտել ո՛չ որպես առանձին, մեկը մյուսից կտրված ինքնուրույն ճգնաժամեր, այլ որպես համաշխարհային կապիտալիստական սիստեմի ընդհանուր ճգնաժամի զարգացման էտապներ։

Արդյոք համաշխարհային կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը միայն բաղաքակա՞ն, թե՞ միայն տնտեսական ճգնաժամ է։ Ո՛չ այս, ո՛չ այն։ Նա ընդհանուր է, այսինքն՝ կապիտալիզմի համաշխարհային սիստեմի համակողմանի ճգնաժամ է, որն ընդգրկում է ինչպես էկոնոմիկան, այնպես էլ քաղաքականությունը։ Ընդ որում հասկանալի է, որ այդ ճգնաժամի հիմքում ընկած է, մի կողմից՝ կապիտալիզմի համաշխարհային տնտեսական սիստեմի ավելի ու ավելի ուժեղացող քայքայումը և, մյուս կողմից՝ կապիտալիզմից անջատված երկրների՝ ՍՍՌՄ-ի, Չինաստանի և մյուս ժողովրդա-դեմոկրատական երկրների աճող տնտեսական հզորությունը։

Ի. ՍՏԱԼԻՆ

21 ապրիլի 1952 թ.

ԸՆԿ. Լ. Դ. ՅԱՐՈՇԵՆԿՈՅԻ ՍԽԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջերս ընկ. Յարոշենկոն ՀամԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամներին էր ուղարկել սույն թվականի մարտի 20-ի իր նամակը տնտեսագիտական մի շարք հարցերի վերաբերյալ, որ քննարկվել են նոյեմբերյան հայտնի դիսկուսիայում։ Նամակը պարունակում է նրա հեղինակի գանգատը, թե դիսկուսիային վերաբերող հիմնական ընդհանրացնող փաստաթղթերում, ինչպես նաև ընկեր Ստալինի «Դիտողություններ»-ում ընկ. Յարոշենկոյի «տեսակետը ոչ մի արտացոլում չի գտել»։ Բացի դրանից, նամակը պարունակում է, ընկ. Յարոշենկոյի առաջարկությունը, որ նրան թույլատրվի կազմելու «Սոցիալիզմի քաղաքատնտեսությունը» մեկ տարվա կամ մեկ ու կես տարվա ընթացքում, դրա համար նրան տալով երկու օգնական։

Ես կարծում եմ, որ հարկ կլինի ըստ էության քննել ինչպես ընկ. Յարոշենկոյի գանգատը, այնպես էլ նրա առաջարկությունը։

Սկսենք գանգատից։

Այսպես ուրեմն, ո՞րն է ընկ. Յարոշենկոյի «տեսակետը», որը ոչ մի արտացոլում չի գտել վերոհիշյալ փաստաթղթերում։

I

ԸՆԿ. ՅԱՐՈՇԵՆԿՈՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՍԽԱԼԸ

Եթե ընկ. Յարոշենկոյի տեսակետը բնութագրենք երկու խոսքով, ապա պետք է ասել, որ այդ տեսակետը ոչ-մարքսիստական է,— հետևաբար խորապես սխալ է։

Ընկ. Յարոշենկոյի գլխավոր սխալն այն է, որ հասարակության զարգացման մեջ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների դերի հարցում նա հեռանում է մարքսիզմից, չափազանց մեծացնում է արտադրո-

ղական ուժերի դերը, ինչպես և չափազանց նվազեցնում է արտադրական հարաբերությունների դերը և բանը վերջացնում է նրանով, որ արտադրական հարաբերությունները սոցիալիզմի ժամանակ հայտարարում է արտադրողական ուժերի մի մաս։

Ընկ. Յարոշենկոն համաձայն է ընդունել, որ արտադրական հարաբերությունները որոշ դեր կատարում են «անտագոնիստական դասակարգային հակասությունների» պայմաններում, որքանով որ այստեղ արտադրական հարաբերությունները «հակասում են արտադրողական ուժերի զարգացմանը»։ Բայց նա այդ դերը սահմանափակում է բացասական դերով, արտադրողական ուժերի զարգացումն արգելակող, նրանց զարգացումը կաշկանդող գործոնի դերով։ Արտադրական հարաբերությունների այլ ֆունկցիաներ, որևէ դրական ֆունկցիա ընկ. Յարոշենկոն չի տեսնում։

Ինչ վերաբերում է սոցիալիստական հասարակարգին, որտեղ արդեն չկան «անտագոնիստական դասակարգային հակասություններ» և որտեղ արտադրական հարաբերությունները «այլևս չեն հակասում արտադրողական ուժերի զարգացմանը»,— ապա ընկ. Յարոշենկոն գտնում է, թե այստեղ անհետանում է արտադրական հարաբերությունների ամեն մի ինքնուրույն դեր, արտադրական հարաբերությունները դադարում են զարգացման լուրջ գործոն լինելուց և նրանք կլանվում են արտադրողական ուժերի կողմից, ինչպես մասը ամբողջի կողմից։ Սոցիալիզմի ժամանակ «մարդկանց արտադրական հարաբերությունները, ասում է ընկ. Յարոշենկոն, մտնում են արտադրողական ուժերի կազմակերպման մեջ, որպես այդ կազմակերպման մի միջոց, մի մոմենտ» (տե՛ս ընկ. Յարոշենկոյի նամակը Կենտկոմի Քաղբյուրոյին)։

Հապա ո՞րն է այդ դեպքում Սոցիալիզմի քաղաքատնտեսության գլխավոր խնդիրը։ Ընկ. Յարոշենկոն պատասխանում է. «Սոցիալիզմի քաղաքատնտեսության գլխավոր պրոբլեմը այդ պատճառով ոչ թե այն է, որ ուսումնասիրի սոցիալիստական հասարակության մարդկանց արտադրական հարաբերությունները, այլ այն, որ մշակի և զարգացնի հասարակական արտադրության մեջ արտադրողական ուժերի կազմակերպման գիտական թեորիան, ժողովրդական տնտեսության զարգացման պլանավորման թեորիան» (տե՛ս ընկ. Յարոշենկոյի ճառը դիսկուսիայի Պլենումում)։

Դրանով էլ հենց բացատրվում է, որ ընկ. Յարոշենկոն չի հետաքրքրվում սոցիալիստական հասարակարգի այնպիսի տնտեսական հարցերով, ինչպիսիք են սեփականության տարբեր ձևերի առկայությունը մեր էկոնոմիկայում, ապրանքային շրջանառությունը, արժեքի օրենքը և այլն, դրանք համարելով լոկ սխոլաստիկ վեճեր հարուցող երկրորդական հարցեր։ Նա ուղղակի հայտարարում է, թե իր Սոցիալիզմի քաղաքատնտեսության մեջ «սոցիալիզմի քաղաքատնտեսության այս կամ այն կատեգորիայի— արժեք, ապրանք, փող, վարկ և այլն,— դերի վերաբերյալ եղած վեճերը, որոնք մեզանում հաճախ սխոլաստիկ բնույթ են ընդունում, փոխարինվում են առողջ դատողություններով՝ հասարակական արտադրության մեջ արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպման մասին, այդ կազմակերպման գիտական հիմնավորման մասին» (տե՛ս ընկ. Յարոշենկոյի ճառը դիսկուսիայի Պլենումի Սեկցիայում)։

Հետևապես, քաղաքատնտեսություն՝ առանց տնտեսական պրոբլեմների։

Ընկ. Յարոշենկոն կարծում է, թե բավական է կարգավորել «արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումը», որպեսզի անցումը սոցիալիզմից

դեպի կոմունիզմ տեղի ունենա առանց հատուկ դժվարությունների։ Նա գրում է, թե դա միանգամայն բավական է կոմունիզմին անցնելու համար։ Նա ուղղակի հայտարարում է, թե «սոցիալիզմի ժամանակ կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող հիմնական պայքարը հանգում է արտադրողական ուժերի ճիշտ կազմակերպման և հասարակական արտադրության մեջ դրանց ռացիոնալ օգտագործման համար մղվող պայքարին» (տե՛ս Հառը դիսկուսիայի Պլենումում)։ Ընկ. Յարոշենկոն հանդիսավոր կերպով պնդարարում է, թե «Կոմունիզմը— դա արտադրողական ուժերի գիտական բարձրագույն կազմակերպումն է հասարակական արտադրության մեջ»։

Հուրս է գալիս, որ կոմունիստական հասարակարգի էությունը սպառվում է «արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումով»։

Այդ ամենից ընկ. Յարոշենկոն հետևություն է անում, թե չի կարող միասնական քաղաքատնտեսություն լինել բոլոր հասարակական ֆորմացիաների համար, թե պետք է լինի երկու քաղաքատնտեսություն. մեկը՝ մինչ սոցիալիստական հասարակական ֆորմացիաների համար, որի առարկան մարդկանց արտադրական հարաբերությունների ուսումնասիրությունն է, մյուսը՝ սոցիալիստական հասարակարգի համար, որի առարկան պետք է լինի ո՛չ թե արտադրական, այսինքն՝ տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը, այլ արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպման հարցերի ուսումնասիրությունը։

Այս է ընկ. Յարոշենկոյի տեսակետը։

Ի՞նչ կարելի է ասել այդ տեսակետի մասին։

Առաջին, սխալ է, թե հասարակության պատմության մեջ արտադրական հարաբերությունների դերը սահմանափակվում է արտադրողական ուժերի զարգացումը կաշկանդող արգելակի դերով։ Երբ մարքսիստները խոսում են արտադրական հարաբերությունների արգելակող դերի մասին, ապա նրանք նկատի ունեն ոչ բոլոր արտադրական հարաբերությունները, այլ միայն հին արտադրական հարաբերությունները, որոնք արդեն չեն համապատասխանում արտադրողական ուժերի աճմանը և, հետևապես, արգելակում են նրանց զարգացումը։ Բայց, ինչպես հայտնի է, հին արտադրական հարաբերություններից բացի գոյություն ունեն նոր արտադրական հարաբերություններ, որոնք փոխարինում են հներին։ Կարելի՞ է ասել, թե նոր արտադրական հարաբերությունների դերը հանգում է արտադրողական ուժերի արգելակի դերին։ Ո՛չ, չի կարելի։ Ընդհակառակը, նոր արտադրական հարաբերությունները այն գլխավոր և վճռական ուժն են, որը և, իսկապես ասած, որոշում է արտադրողական ուժերի հետագա, ընդամենը հզոր զարգացումը, և առանց որոնց արտադրողական ուժերը դատապարտված են նվազման, ինչպես դա ներկայումս տեղի ունի կապիտալիստական երկրներում։

Ոչ ոք չի կարող ժխտել հնգամյակների ընթացքում մեր սովետական տրդյունաբերության արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը։ Բայց այդ զարգացումը տեղի չէր ունենա, եթե հին, կապիտալիստական արտադրական հարաբերությունները մենք 1917 թվականի հոկտեմբերին չփոխարինեինք նոր, սոցիալիստական արտադրական հարաբերություններով։ Առանց մեր երկրի արտադրական, տնտեսական հարաբերությունների մեջ եղած այդ հեղաշրջման, արտադրողական ուժերը մեզանում ևս կնվազեին այնպես, ինչպես նրանք այժմ նվազում են կապիտալիստական երկրներում։

Ոչ ոք չի կարող ժխտել մեր գյուղատնտեսության արտադրողական ուժերի վիթխարի զարգացումը վերջին 20—25 տարիների ընթացքում։ Բայց այդ զարգացումը տեղի չէր ունենա, եթե մենք հին արտադրական կապիտալիստական հարաբերությունները գյուղում երեսնական թվականներին չփոխարինեինք նոր, կոլեկտիվիստական արտադրական հարաբերություններով։ Առանց այդ արտադրական հեղաշրջման մեր գյուղատնտեսության արտադրողական ուժերը կնվաղեին այնպես, ինչպես նրանք այժմ նվաղում են կապիտալիստական երկրներում։

Նոր արտադրական հարաբերությունները, իհարկե, չեն կարող հավերժ նոր մնալ և չեն մնում, նրանք սկսում են հնանալ և հակասության մեջ ընկնել արտադրողական ուժերի հետագա զարգացման հետ, նրանք սկսում են կորցնել արտադրողական ուժերի գլխավոր շարժիչի դերը և դառնում են դրանց արգելակը։ Այն ժամանակ այդպիսի, արդեն հնացած արտադրական հարաբերությունների տեղում երևան են գալիս նոր արտադրական հարաբերություններ, որոնց դերն այն է, որ լինեն արտադրողական ուժերի հետագա զարգացման գլխավոր շարժիչը։

Արտադրական հարաբերությունների զարգացման այդ յուրատեսակությունը՝ արտադրողական ուժերի արգելակի դերից դեպի դրանց գլխավոր շարժիչի դերը և գլխավոր շարժիչի դերից դեպի արտադրողական ուժերի արգելակի դերը,— կազմում է մարքսիստական մատերիալիստական դիալեկտիկայի գլխավոր տարրերից մեկը։ Այժմ այդ գիտեն մարքսիզմի բոլոր նախակրթարանցիները։ Այդ չգիտե, բանից դուրս է գալիս, ընկ. Յարոշենկոն։

Երկրորդ, սխալ է, թե արտադրական, այսինքն՝ տնտեսական հարաբերությունների ինքնուրույն դերը անհետանում է սոցիալիզմի ժամանակ, թե արտադրական հարաբերությունները կլանվում են արտադրողական ուժերի կողմից, թե սոցիալիզմի ժամանակ հասարակական արտադրությունը հանգում է արտադրողական ուժերի կազմակերպմանը։ Մարքսիզմը հասարակական արտադրությունը գիտում է որպես մի ամբողջություն, որն ունի երկու անխզելի կողմեր՝ հասարակության արտադրողական ուժեր (հասարակության հարաբերությունները դեպի բնության ուժերը, որոնց դեմ մղվող պայքարում հասարակությունը ձեռք է բերում անհրաժեշտ նյութական բարիքներ) և արտադրական հարաբերություններ (մարդկանց հարաբերությունները իրար հետ արտադրության պրոցեսում)։ Դրանք հասարակական արտադրության երկու տարբեր կողմերն են, թեպետև իրար հետ կապված են անխզելի կերպով։ Եվ հենց այն պատճառով, որ դրանք հանդիսանում են հասարակական արտադրության տարբեր կողմերը, կարող են ներգործել մեկը մյուսի վրա։ Պնդել, թե այդ կողմերից մեկը կարող է կլանվել մյուսի կողմից և դառնալ նրա բաղադրիչ մասը,— նշանակում է ամենալուրջ կերպով մեղանչել մարքսիզմի դեմ։

Մարքսն ասում է.

«Արտադրության մեջ մարդիկ ներգործում են ոչ միայն բնության վրա, այլև միմյանց վրա։ Նրանք չեն կարող արտադրել, առանց որոշ ձևով միանալու համատեղ գործունեության համար և իրենց գործունեության փոխադարձ փոխանակության համար։ Արտադրելու համար մարդիկ որոշ կապերի ու հարաբերությունների մեջ են մտնում, և միայն այդ հասարակական կապերի ու

հարաբերությունների միջոցով գոյություն ունի նրանց հարաբերությունը բնության հետ, դրանց միջոցով է տեղի ունենում արտադրությունը» (տե՛ս «Կ. Մարքս և Ֆ. Էնգելս», հ. V, էջ 429)։

Հետևապես, հասարակական արտադրությունը կազմված է երկու կողմերից, որոնք այն ամենով հանդերձ, որ նրանք ոնխզելիորեն կապված են մեկը մյուսի հետ, այնուամենայնիվ, արտացոլում են երկու շարք տարբեր հարաբերություններ՝ մարդկանց հարաբերություններ դեպի բնությունը (արտադրողական ուժեր) և մարդկանց հարաբերություններն իրար հետ արտադրության պրոցեսում (արտադրական հարաբերություններ)։ Արտադրության երկու կողմերի առկայությունն է միայն մեզ տալիս հասարակական արտադրություն, միևնույն է՝ խոսքը վերաբերում է սոցիալիստակա՛ն հասարակարգին, թե մյուս հասարակական ֆորմացիաներին։

Ընկ. Յարոշենկոն, ըստ երևույթին, այնքան էլ համաձայն չէ Մարքսի հետ։ Նա գտնում է, թե Մարքսի այդ դրույթը կիրառելի չէ սոցիալիստական հասարակարգի նկատմամբ։ Հենց այդ պատճառով էլ նա Սոցիալիզմի բաղաքատնտեսության պրոբլեմը հանգեցնում է արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպման խնդրին, դեն նետելով արտադրական, տնտեսական հարաբերությունները և նրանցից կտրելով արտադրողական ուժերը։

Հետևապես, մարքսիստական Քաղաքատնտեսության փոխարեն ընկ. Յարոշենկոյի մոտ ստացվում է Բոգդանովի «Համընդհանուր կազմակերպական գիտության» նման ինչ-որ բան։

Այսպիսով, վերցնելով այն ճշմարիտ միտքը, որ արտադրողական ուժերը արտադրության առավել շարժուն և ռևոլուցիոն ուժերն են, ընկ. Յարոշենկոն այդ միտքը հասցնում է անհեթեթության, արտադրական, տնտեսական հարաբերությունների դերի ժխտմանը սոցիալիզմի ժամանակ, ընդ որում հասարակական լիարյուն արտադրության փոխարեն նրա մոտ ստացվում է արտադրության միակողմանի և վտիտ տեխնոլոգիա,— Բուխարինյան «հասարակական-կազմակերպական տեխնիկայի» նման ինչ-որ բան։

Մարքսն ասում է.

«Իրենց կյանքի հասարակական արտադրության ընթացքում (այսինքն՝ մարդկանց կյանքի համար անհրաժեշտ նյութական բարիքներ արտադրելու գործում— Ի. Ստ.) մարդիկ մտնում են որոշ, անհրաժեշտ, իրենց կամքից անկախ հարաբերությունների՝ արտադրական հարաբերությունների մեջ, որոնք համապատասխանում են նրանց նյութական արտադրողական ուժերի զարգացման որոշ աստիճանին։ Այդ արտադրական հարաբերությունների ամբողջությունը կազմում է հասարակության տնտեսական ստրուկտուրան, այն ռեալ բազիսը, որի վրա բարձրանում է իրավական ու քաղաքական վերնաշենքը և որին համապատասխանում են հասարակական գիտակցության որոշ ձևեր» (տե՛ս «Քաղաքատնտեսության քննադատության շուրջը» առաջաբանը)։

Դա նշանակում է, որ ամեն մի հասարակական ֆորմացիա, այդ թվում նաև սոցիալիստական հասարակարգը, ունի իր, մարդկանց արտադրական հարաբերությունների ամբողջությունից կազմված տնտեսական բազիսը։ Հարց է ծագում՝ ի՞նչ վիճակում է սոցիալիստական հասարակարգի տնտեսական բազիսի հարցը ընկ. Յարոշենկոյի մոտ։ Ինչպես հայտնի է, ընկ. Յարոշենկոն արդեն լիկվիդացրել է արտադրական հարաբերությունները սոցիալիզմի ժամանակ, որպես քիչ թե շատ ինքնուրույն մի բնագավառ, դրանցից մնացած

փոքր բան մտցնելով արտադրողական ուժերի կազմակերպման կազմի մեջ։ Հարց է առաջանում՝ արդյոք սոցիալիստական հասարակարգն ունի՞ իր սեփական տնտեսական բազիսը։ Ակներև է, քանի որ սոցիալիզմի ժամանակ արտադրական հարաբերությունները չքացել են որպես շատ թե քիչ ինքնուրույն ուժ, սոցիալիստական հասարակարգը մնում է առանց իր տնտեսական բազիսի։

Հետևապես՝ սոցիալիստական հասարակարգ՝ առանց իր տնտեսական բազիսի։ Ստացվում է բավական զվարճալի պատմություն...

Հնարավո՞ր է արդյոք ընդհանրապես հասարակարգ առանց իր տնտեսական բազիսի։ Ընկ. Յարոշենկոն, ակներևաբար, գտնում է, որ հնարավոր է։ Իսկ մարքսիզմը գտնում է, որ աշխարհում այդպիսի հասարակարգեր չեն լինում։

Վերջապես, սխալ է, թե կոմունիզմը արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումն է, թե կոմունիստական հասարակարգի էությունը սպառվում է արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումով, թե բավական է ռացիոնալ կերպով կազմակերպել արտադրողական ուժերը, որպեսզի առանց հատուկ դժվարությունների անցնենք կոմունիզմին։ Մեր գրականության մեջ կա կոմունիզմի ուրիշ սահմանում, ուրիշ ֆորմուլա, այն է՝ լենինյան ֆորմուլան. «Կոմունիզմը սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»։ Ակներև է, ընկ. Յարոշենկոյին դուր չի գալիս լենինյան ֆորմուլան և նա այն փոխարինում է իր սեփական ինքնաստեղծ ֆորմուլայով՝ «Կոմունիզմը— դա արտադրողական ուժերի բարձրագույն գիտական կազմակերպումն է հասարակական արտադրության մեջ»։

Նախ, ոչ ոքի հայտնի չէ, թե ինչ է իրենից ներկայացնում արտադրողական ուժերի այդ, ընկ. Յարոշենկոյի կողմից թմբկահարվող «բարձրագույն գիտական» կամ «ռացիոնալ» կազմակերպումը, ի՞նչ կոնկրետ բովանդակություն ունի այդ կազմակերպումը։ Ընկ. Յարոշենկոն այդ մտացածին ֆորմուլան տասնյակ անգամ կրկնում է իր ճառերում դիսկուսիայի Պլենումում, սեկցիաներում, Քաղբյուրոյի անդամներին ուղարկած իր նամակում, բայց նա ոչ մի տեղ ոչ մի հատիկ բառով չի փորձում պարզաբանել, թե իսկապես ինչպե՞ս պետք է հասկանալ արտադրողական ուժերի «ռացիոնալ կազմակերպումը», որն իբր թե իրենով սպառում է կոմունիստական հասարակարգի էությունը։

Երկրորդ, եթե արդեն պետք է ընտրություն անել երկու ֆորմուլաների միջև, ապա պետք է դեն նետել ոչ թե լենինյան ֆորմուլան, որը միակ ճիշտն է, այլ ընկ. Յարոշենկոյի այսպես կոչված ֆորմուլան, որը բացահայտ մտացածին է և ոչ-մարքսիստական, վերցված Բոգդանովյան «Համընդհանուր կազմակերպական գիտության» զինանոցից։

Ընկ. Յարոշենկոն կարծում է, թե բավական է հասնել արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպմանը, որպեսզի կարելի լինի մթերքների առատություն ստանալ և անցնել կոմունիզմին, «յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» ֆորմուլայից անցնել «յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների» ֆորմուլային։ Սա մեծ մոլորություն է, որը ցույց է տալիս սոցիալիզմի տնտեսական զարգացման օրենքները բոլորովին չհասկանալը։ Ընկ. Յարոշենկոն չափազանց հասարակ, երեխայի պես հասարակ է պատկերացնում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պայմանները։ Ընկ. Յարոշենկոն չի հասկանում, որ չի կարելի հասնել ո՛չ մթերքների առատության, որ կարողանա ծածկել

հասարակության բոլոր պահանջմունքները, ո՛չ էլ անցմանը «յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների» ֆորմուլային, ուժի մեջ թողնելով տնտեսական այնպիսի փաստեր, ինչպիսին են կոլտնտեսային-խմբային սեփականությունը, ապրանքային շրջանառությունը և այլն։ Ընկ. Յարոշենկոն չի հասկանում, որ նախքան «յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների» ֆորմուլային անցնելը հարկավոր է անցնել հասարակության տնտեսական ու կուլտուրական վերազաստիարակման մի շարք էտապներ, որոնց ընթացքում աշխատանքը սոսկ միայն կյանքի պահպանման միջոցից հասարակության աչքում կդառնա առաջին կենսական պահանջ, իսկ հանրային սեփականությունը՝ հասարակության դոյության անսասան ու անձեռնմխելի հիմք։

Դեպի կոմունիզմն իսկական և ոչ-դեկլարատիվ անցում նախապատրաստելու համար հարկավոր է իրականացնել առնվազն երեք հիմնական նախնական պայմաններ։

1. Անհրաժեշտ է, նախ, հաստատուն կերպով ապահովել ոչ թե արտադրողական ուժերի մտացածին «ռացիոնալ կազմակերպումը», այլ ամբողջ հասարակական արտադրության անընդհատ աճումը՝ արտադրության միջոցների արտադրության առավել աճմամբ։ Արտադրության միջոցների արտադրության առավել աճումն անհրաժեշտ է ո՛չ միայն այն պատճառով, որ նա պետք է սարքավորումով ապահովի ինչպես իր սեփական ձեռնարկությունները, այնպես էլ ժողովրդական տնտեսության մնացած բոլոր ճյուղերի ձեռնարկությունները, այլև այն պատճառով, որ առանց նրան առհասարակ անհնարին է ընդլայնված վերարտադրություն իրականացնելը։

2. Անհրաժեշտ է, երկրորդ, հօգուտ կոլտնտեսությունների, և, հետևապես, հօգուտ ամբողջ հասարակության իրականացվող աստիճանական անցումների միջոցով կոլտնտեսային սեփականությունը բարձրացնել համաժողովրդական սեփականության մակարդակին, իսկ ապրանքային շրջանառությունը նույնպես աստիճանական անցումների միջոցով փոխարինել մթերափոխանակության սիստեմով, որպեսզի կենտրոնական իշխանությունը կամ մի որևէ այլ հասարակական-տնտեսական կենտրոն կարողանա հասարակական արտադրության ամբողջ արտադրանքն ընդդրկել հօգուտ հասարակության։

Ընկ. Յարոշենկոն սխալվում է, պնդելով, թե սոցիալիզմի ժամանակ ոչ մի հակասություն չկա հասարակության արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի միջև։ Իհարկե, մեր այժմյան արտադրական հարաբերությունները այն ժամանակաշրջանն են ապրում, երբ նրանք, լիովին համապատասխանելով արտադրողական ուժերի աճմանը, դրանց առաջ են շարժում յոթմղոնանոց քայլերով։ Բայց ճիշտ չէր լինի հանգստանալ դրանով և կարծել, թե ոչ մի հակասություն դոյություն չունի մեր արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև։ Հակասություններ անպայմանական և կլինեն, քանի որ արտադրական հարաբերությունների զարգացումը ետ է մնում և ետ կմնա արտադրողական ուժերի զարգացումից։ Ղեկավար օրգանների ճիշտ քաղաքականության դեպքում այդ հակասությունները չեն կարող վերածվել հակադրության, և բանն այստեղ չի կարող հասնել կոնֆլիկտի՝ հասարակության արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի միջև։ Այլ բան է, եթե մենք վարենք ոչ-ճիշտ քաղաքականություն, այն քաղաքականության նման, որ հանձնարարում է ընկ. Յարոշենկոն։ Այդ դեպ-

բում կոնֆլիկտն անխուսափելի կլինի, և մեր արտադրական հարաբերություն-ները կարող են դառնալ արտադրողական ուժերի հետագա զարգացման շատ լուրջ արգելակ։

Ուստի ղեկավար օրգանների խնդիրն այն է, որ ժամանակին նկատեն աճող հակասությունները և ժամանակին միջոցներ ձեռք առնեն դրանք հաղթահարելու համար՝ արտադրական հարաբերություններն արտադրողական ուժերի աճմանը հարմարեցնելու միջոցով։ Այդ ամենից առաջ վերաբերում է տնտեսական այնպիսի երևույթների, ինչպիսին են խմբային-կոլտնտեսային սեփականությունը, ապրանքային շրջանառությունը։ Մենք, իհարկե, այդ երևույթները ներկայումս հաջողությամբ օգտագործում ենք սոցիալիստական տնտեսության զարգացման համար, և դրանք անվիճելի օգուտ են բերում մեր հասարակությանը։ Տարակույս չկա, որ դրանք օգուտ կբերեն նաև մոտիկ ապագայում։ Բայց աններելի կուրություն կլիներ չտեսնել, որ դրա հետ մեկտեղ այդ երևույթներն արդեն այժմ սկսում են արգելակել մեր արտադրողական ուժերի հզոր զարգացումը, որքանով որ նրանք խոչընդոտներ են ստեղծում ամբողջ ժողովրդական տնտեսությունը, առանձնապես գյուղատնտեսությունը, պետական պլանավորումով լրիվ չափով ընդգրկելուն։ Տարակույս չի կարող լինել, որ որքան առաջ գնանք, այդ երևույթներն այնքան ավելի են արգելակելու մեր երկրի արտադրողական ուժերի հետագա աճումը։ Հետևաբար, խնդիրն այն է, որ այդ հակասությունները լիկվիդացնենք կոլտնտեսային սեփականությունը աստիճանաբար համաժողովրդական սեփականություն դարձնելու և ապրանքային շրջանառության փոխարեն— նույնպես աստիճանականության կարգով— մթերափոխանակություն մտցնելու միջոցով։

3. Անհրաժեշտ է, երրորդ, հասնել հասարակության այնպիսի կուլտուրական աճման, որը հասարակության բոլոր անդամների համար ապահովի նրանց ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների բազմակողմանի զարգացումը, որպեսզի հասարակության անդամները հնարավորություն ունենան ստանալու բավականաչափ կրթություն՝ հասարակական զարգացման ակտիվ գործիչներ դառնալու համար, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ազատորեն ընտրելու պրոֆեսիա և ոչ թե, աշխատանքի գոյություն ունեցող բաժանման հետևանքով, ամբողջ կյանքում գամված լինեն մեկ որևէ պրոֆեսիայի։

Ի՞նչ է պահանջվում դրա համար։

Ճիշտ չէր լինի կարծել, թե կարելի է հասնել հասարակության անդամների այդպիսի լուրջ կուլտուրական աճման առանց լուրջ փոփոխությունների՝ աշխատանքի այժմյան դրության մեջ։ Դրա համար հարկավոր է ամենից առաջ աշխատանքային օրը կրճատել՝ հասցնելով գոնե 6 ժամի, իսկ հետո էլ 5 ժամի։ Դա անհրաժեշտ է, որպեսզի հասարակության անդամները բավականաչափ ազատ ժամանակ ունենան, որ անհրաժեշտ է բազմակողմանի կրթություն ստանալու համար։ Դրա համար, այնուհետև, հարկավոր է մտցնել ընդհանուր-պարտադիր պոլիտեխնիկական կրթություն, որ անհրաժեշտ է, որպեսզի հասարակության անդամները հնարավորություն ունենան ազատորեն ընտրելու պրոֆեսիա և ամբողջ կյանքում գամված չլինեն որևէ մեկ պրոֆեսիայի։ Դրա համար, այնուհետև, հարկավոր է արմատապես բարելավել բնակարանային պայմանները և բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձը բարձրացնել առնվազն կրկնակի չափով, եթե ոչ ավելին, ինչպես դրա-

մական աշխատավարձը ուղղակի բարձրացնելու միջոցով, այնպես էլ, հատկապես, մասսայական սպառման առարկաների դների հետագա սիստեմատիկ իջեցման միջոցով։

Սրանք են դեպի կոմունիզմ անցումն նախապատրաստելու հիմնական պայմանները։

Նախնական այս բոլոր պայմանները, միասին վերցրած, կատարելուց հետո միայն կարելի է հույս ունենալ, որ աշխատանքը հասարակության անդամների աչքում ծանր պարտականությունից կվերածվի «առաջին կենսական պահանջի» (Մարքս), որ «աշխատանքը ծանր բեռից կվերածվի բավականության» (Էնգելս), որ հանրային սեփականությունը հասարակության բոլոր անդամների կողմից կգնահատվի որպես հասարակության գոյության անսասան և անձեռնմխելի հիմք։

Նախնական այս բոլոր պայմանները, միասին վերցրած, կատարելուց հետո միայն հնարավոր կլինի «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սոցիալիստական ֆորմուլայից անցնել «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջմունքների» կոմունիստական ֆորմուլային։

Դա կլինի արմատական անցում մի էկոնոմիկայից՝ սոցիալիզմի էկոնոմիկայից մյուս, ավելի բարձր էկոնոմիկային, կոմունիզմի էկոնոմիկային։

Ինչպես երևում է, անցումը սոցիալիզմից դեպի կոմունիզմ այդքան հասարակ բան չէ, ինչպես այդ պատկերացնում է ընկ. Յարոշենկոն։

Փորձ անել տնտեսական ամենալուրջ փոփոխություններ պահանջող այս ամբողջ բարդ ու բազմակերպ գործը հանդեցնել «արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպմանը», ինչպես այդ անում է ընկ. Յարոշենկոն,— նշանակում է մարքսիզմը նենգափոխել բոդդանովշչինայով։

II

ԸՆԿ. ՅԱՐՈՇԵՆԿՈՅԻ ՄՅՈՒՍ ՍԽԱԼՆԵՐԸ

1. Իր սխալ տեսակետից ընկ. Յարոշենկոն սխալ հետևություններ է անում քաղաքատնտեսության բնույթի և առարկայի մասին։

Ընկ. Յարոշենկոն ժխտում է հասարակական բոլոր ֆորմացիաների համար միասնական քաղաքատնտեսության անհրաժեշտությունը, ելնելով այն բանից, որ հասարակական ամեն մի ֆորմացիա ունի իր ուրույն տնտեսական օրենքները։ Բայց նա բոլորովին իրավացի չէ, և նա այստեղ տարաձայնվում է այնպիսի մարքսիստների հետ, ինչպես Էնգելսը, Լենինը։

Էնգելսն ասում է, որ քաղաքատնտեսությունը «գիտություն է այն պայմանների ու ձևերի մասին, որոնցում տեղի է ունենում արտադրությունն ու փոխանակությունը մարդկային տարբեր հասարակություններում և որոնցում, դրան համապատասխան, ամեն անգամ տեղի է ունենում արդյունքների բաշխումը» («Անտի-Դյուրինգ»)։ Հետևաբար, քաղաքատնտեսությունը ուսումնասիրում է ո՛չ թե որևէ մեկ հասարակական ֆորմացիայի, այլ տարբեր հասարակական ֆորմացիաների տնտեսական զարգացման օրենքները։

Այդ բանին, ինչպես հայտնի է, լիովին համաձայն է Լենինը, որը Բուխարինի «Անցման ժամանակաշրջանի էկոնոմիկան» գրքույկի վերաբերյալ իր

քննադատական դիտողություններում ասել է, որ Բուխարինը իրավացի չէ, քաղաքատնտեսության գործողության ոլորտը սահմանափակելով ապրանքային և ամենից առաջ կապիտալիստական արտադրությամբ, ընդսմին նկատելով, որ Բուխարինը այստեղ «էնգելսի հանդեպ մի քայլ ետ» է գնում։

Այդ բանին լիովին համապատասխանում է քաղաքատնտեսության այն սահմանումը, որ տրված է քաղաքատնտեսության դասագրքի նախագծում, որտեղ ասված է, որ քաղաքատնտեսությունը մի գիտություն է, որն ուսումնասիրում է «նյութական բարիքների հասարակական արտադրության և բաշխման օրենքները մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճաններում»։

Եվ այդ հասկանալի է։ Հասարակական տարբեր ֆորմացիաները իրենց տնտեսական զարգացման մեջ ենթարկվում են ոչ միայն իրենց ուրույն տնտեսական օրենքներին, այլև այն տնտեսական օրենքներին, որոնք ընդհանուր են բոլոր ֆորմացիաների համար, օրինակ, այնպիսի օրենքների, ինչպես միասնական հասարակական արտադրության մեջ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միասնության օրենքը, հասարակական բոլոր ֆորմացիաների զարգացման պրոցեսում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև եղած հարաբերությունների օրենքը։ Ուրեմն՝ հասարակական ֆորմացիաները ո՛չ միայն միմյանցից անջատված են իրենց ուրույն օրենքներով, այլև միմյանց հետ կապված են բոլոր ֆորմացիաների համար ընդհանուր տնտեսական օրենքներով։

Էնգելսը միանգամայն իրավացի էր, երբ ասում էր.

«Բուրժուական քաղաքատնտեսությունն ավելի բազմակողմանի քննադատելու համար բավական չէր ծանոթ լինել արտադրության, փոխանակության և բաշխման կապիտալիստական ձևին։ Հարկավոր էր նաև, գեթ հիմնական գծերով, հետազոտել ու համեմատության մեջ դնել նրա նախընթաց ձևերը, կամ այն ձևերը, որոնք դեռ գոյություն ունեն նրա կողքին՝ ավելի նվազ զարգացած երկրներում» («Անտի-Դյուրինգ»)։

Ակնհայտ է, որ այստեղ, այս հարցում ընկ. Յարոշենկոն ձայնակցում է Բուխարինին։

Այնուհետև։ Ընկ. Յարոշենկոն պնդում է, թե իր «Սոցիալիզմի քաղաքատնտեսության» մեջ «քաղաքատնտեսության կատեգորիաները— արժեքը, ապրանքը, փողը, վարկը և այլն— փոխարինվում են առողջ դատողություններով հասարակական արտադրության մեջ արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպման մասին», թե, հետևաբար, այդ քաղաքատնտեսության առարկան ո՛չ թե սոցիալիզմի արտադրական հարաբերություններն են, այլ «արտադրողական ուժերի կազմակերպման գիտական թեորիայի, ժողովրդական տնտեսության պլանավորման թեորիայի մշակումն ու զարգացումն է և այլն», թե սոցիալիզմի ժամանակ արտադրական հարաբերությունները կորցնում են իրենց ինքնուրույն նշանակությունը և կլանվում են արտադրողական ուժերի կողմից, որպես նրանց բաղադրիչ մի մասը։

Պետք է ասել, որ մեզանում այդպիսի չտեսնված անհեթեթություն դեռևս դուրս չի տվել և ոչ մի խելքը թռցրած «մարքսիստ»։ Ախր ի՞նչ է նշանակում՝ սոցիալիզմի քաղաքատնտեսություն առանց տնտեսական, արտադրական պրոբլեմների։ Մի՞թե աշխարհում այդպիսի քաղաքատնտեսություն է լինում։ Ի՞նչ է նշանակում սոցիալիզմի քաղաքատնտեսության մեջ տնտեսական պրոբ-

լեմները փոխարինել արտադրողական ուժերի կազմակերպման պրոբլեմներով։ Դա նշանակում է լիկվիդացնել սոցիալիզմի քաղաքատնտեսությունը։ Ընկ. Յարոշենկոն հենց այդպես էլ վարվում է,— նա լիկվիդացնում է սոցիալիզմի քաղաքատնտեսությունը։ Այստեղ նա լիովին միանում է Բուխարինին։ Բուխարինը ասում էր, թե կապիտալիզմի ոչնչացումով պետք է ոչնչանա քաղաքատնտեսությունը։ Ընկ. Յարոշենկոն այդ չի ասում, բայց նա այդ անում է՝ լիկվիդացնելով սոցիալիզմի քաղաքատնտեսությունը։ Ճիշտ է, դրա հետ միասին նա ձևացնում է, թե լրիվ համաձայն չէ Բուխարինի հետ, բայց դա խորամանկություն է, այն էլ կոպեկանոց խորամանկություն։ Նա իրականում անում է այն, ինչ քարոզում էր Բուխարինը և ինչի դեմ հանդես էր գալիս Լենինը։ Ընկ. Յարոշենկոն քարշ է գալիս Բուխարինի հետքերով։

Այնուհետև։ Սոցիալիզմի քաղաքատնտեսության պրոբլեմները ընկ. Յարոշենկոն հանգեցնում է արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպման պրոբլեմներին, ժողովրդական տնտեսության պլանավորման պրոբլեմներին և այլն։ Բայց նա խորապես մոլորվում է։ Արտադրողական ուժերի կազմակերպման, ժողովրդական տնտեսության պլանավորման և այլ պրոբլեմները ո՛չ թե քաղաքատնտեսության առարկան են, այլ ղեկավար օրգանների տնտեսական քաղաքականության առարկան։ Այդ երկու տարբեր բնագավառներ են, որոնց չի կարելի շփոթել։ Ընկ. Յարոշենկոն այդ երկու տարբեր բաները խառնել է իրար և հիմար դրության մեջ է ընկել։ Քաղաքատնտեսությունը ուսումնասիրում է մարդկանց արտադրական հարաբերությունների զարգացման օրենքները։ Տնտեսական քաղաքականությունը դրանից անում է գործնական հետևություններ, կոնկրետացնում է դրանք և այդ հիման վրա կառուցում իր ամենօրյա աշխատանքը։ Քաղաքատնտեսությունը տնտեսական քաղաքականության հարցերով ծանրաբեռնելը նշանակում է կործանել քաղաքատնտեսությունը որպես գիտություն։

Քաղաքատնտեսության առարկան մարդկանց արտադրական, տնտեսական հարաբերություններն են։ Դրանք են՝ ա) արտադրության միջոցների սեփականության ձևերը. բ) դրանից բխող՝ սոցիալական տարբեր խմբերի դիրքը արտադրության մեջ և նրանց փոխհարաբերությունը, կամ, ինչպես ասում է Մարքսը՝ «իրենց գործունեության փոխադարձ փոխանակությունը». գ) արդյունքների բաշխման՝ դրանցից ամբողջապես կախված ձևերը։ Այս ամենը միասին կազմում են քաղաքատնտեսության առարկան։

Այս սահմանման մեջ բացակայում է «փոխանակություն» բառը, որը կա Էնգելսի սահմանման մեջ։ Այդ բառը բացակայում է այն պատճառով, որ շատերը «փոխանակություն» բառը սովորաբար հասկանում են որպես ապրանքների փոխանակություն, որը հատուկ է ոչ բոլոր, այլ միայն որոշ հասարակական ֆորմացիաների, որ երբեմն թյուրիմացություն է առաջացնում, թեև Էնգելսը «փոխանակություն» ասելով հասկանում էր ո՛չ միայն ապրանքային փոխանակությունը։ Սակայն, ինչպես երևում է, այն, ինչ Էնգելսը հասկանում էր «փոխանակություն» ասելով, իր տեղը գտել է վերոհիշյալ սահմանման մեջ, որպես նրա բաղադրիչ մի մասը։ Հետևապես, քաղաքատնտեսության առարկայի այդ սահմանումն իր բովանդակությամբ լիովին համընկնում է Էնգելսի սահմանման հետ։

2. Երբ խոսում են այս կամ այն հասարակական ֆորմացիայի հիմնական տնտեսական օրենքի մասին, սովորաբար ելնում են այն բանից, որ այդ ֆոր-

մացիան չի կարող ունենալ մի քանի հիմնական տնտեսական օրենքներ, որ նա կարող է ունենալ միմիայն մեկ որևէ հիմնական տնտեսական օրենք, հատկապես որպես հիմնական օրենք։ Հակառակ դեպքում յուրաքանչյուր հասարակական ֆորմացիայի համար մենք կունենայինք մի քանի հիմնական տնտեսական օրենքներ, մի բան, որ հակասում է հենց հիմնական օրենք հասկացողությանը։ Սակայն ընկ. Յարոշենկոն համաձայն չէ դրանում։ Նա գտնում է, թե կարելի է ունենալ սոցիալիզմի ոչ թե մեկ, այլ մի քանի հիմնական տնտեսական օրենքներ։ Դա աներևակայելի է, բայց դա փաստ է։ Դիսկուսիայի Պլենումում արտասանած իր ճառում նա ասում է.

«Հասարակական արտադրության և վերարտադրության նյութական ֆոնդերի մեծություններն ու հարաբերակցությունները որոշվում են հասարակական արտադրության մեջ ներդրավվող աշխատուժի առկայությամբ և աճման հեռանկարով։ Դա սոցիալիստական հասարակության հիմնական տնտեսական օրենքն է, որը պայմանավորում է սոցիալիստական հասարակական արտադրության և վերարտադրության ստրուկտուրան»։

Դա սոցիալիզմի առաջին հիմնական տնտեսական օրենքն է։

Այն նույն ճառում ընկ. Յարոշենկոն հայտարարում է.

«Սոցիալիստական հասարակության մեջ I և II ստորաբաժանումների միջև հարաբերակցությունները պայմանավորվում են արտադրության միջոցների արտադրության պահանջով՝ այն չափով, որ անհրաժեշտ է ամբողջ աշխատունակ բնակչությանը հասարակական արտադրության մեջ ներգրավելու համար։ Դա սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքն է և միևնույն ժամանակ դա մեր Կոնստիտուցիայի պահանջն է, որը բխում է սովետական մարդկանց աշխատանքի իրավունքից»։

Դա սոցիալիզմի, այսպես ասած, երկրորդ հիմնական տնտեսական օրենքն է։

Վերջապես, Քաղբյուրոյի անդամներին հասցեագրած իր նամակում ընկ. Յարոշենկոն հայտարարում է.

«Ելնելով դրանից, սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի էական գծերը և պահանջները կարելի է, իմ կարծիքով, ձևակերպել մոտավորապես հետևյալ կերպ՝ հասարակության կյանքի նյութական և կուլտուրական պայմանների անընդհատ աճող ու կատարելագործվող արտադրություն»։

Դա սոցիալիզմի արդեն երրորդ հիմնական տնտեսական օրենքն է։

Արդյոք այս բոլո՞ր օրենքներն են հանդիսանում սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքներ, թե դրանցից միայն մեկը, և եթե դրանցից միայն մեկը, ապա հատկապես ո՞րը,— այս հարցերին ընկ. Յարոշենկոն պատասխան չի տալիս Քաղբյուրոյի անդամներին հասցեագրած իր վերջին նամակում։ Նա, Քաղբյուրոյի անդամներին հասցեագրած իր նամակում ձևակերպելով սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը, պետք է կարծել, «մոռացել է», որ երեք ամիս առաջ դիսկուսիայի Պլենումում արտասանած իր ճառում նա արդեն ձևակերպել էր սոցիալիզմի երկու ուրիշ հիմնական տնտեսական օրենքներ, ըստ երևույթին կարծելով, թե ուշադրություն չեն դարձնի այդ առնվազն կասկածելի կոմբինացիայի վրա։ Բայց, ինչպես երևում է, նրա հույսերը չարդարացան։

Ենթադրենք, թե ընկ. Յարոշենկոյի ձևակերպած սոցիալիզմի առաջին երկու հիմնական տնտեսական օրենքներն այլևս գոյություն չունեն։ Թե՞ ընկ.

Յարոշենկոն այսուհետև սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքն է համարում իր երրորդ ձևակերպումը, որ նա շարադրել է Քաղբյուրոյի անդամներին հասցեագրած նամակում։ Դիմենք ընկ. Յարոշենկոյի նամակին։

Ընկ. Յարոշենկոն այդ նամակում ասում է, թե ինքը համաձայն չէ սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի այն սահմանմանը, որ տրված է ընկեր Ստալինի «Դիտողություններ»-ում։ Նա ասում է.

«Այդ սահմանման մեջ գլխավորը «ամբողջ հասարակության պահանջմունքների... առավելագույն բավարարման ապահովումն է»։ Արտադրությունն այստեղ ցույց է տրված որպես մի միջոց այդ գլխավոր նպատակին՝ պահանջմունքների բավարարմանը հասնելու համար։ Այդպիսի սահմանումը հիմք է տալիս կարծելու, որ սոցիալիզմի Ձեր ձևակերպած հիմնական տնտեսական օրենքը ելնում է ոչ թե արտադրության առաջնությունից, այլ սպառման առաջնությունից»։

Ակնհայտ է, որ ընկ. Յարոշենկոն բոլորովին չի հասկացել պրոբլեմի էությունը և չի տեսնում, որ սպառման կամ արտադրության առաջնության վերաբերյալ խոսակցությունները ամենևին առնչություն չունեն հարցի հետ։ Երբ խոսում են հասարակական այս կամ այն պրոցեսների առաջնության մասին մյուս պրոցեսների նկատմամբ, ապա սովորաբար ելնում են այն բանից, որ այդ երկու պրոցեսներն էլ քիչ թե շատ համանման են։ Կարելի է և պետք է խոսել սպառման միջոցների արտադրության նկատմամբ արտադրության միջոցների արտադրության առաջնության մասին, որովհետև թե՛ այս և թե՛ մյուս դեպքում մենք գործ ունենք արտադրության հետ, հետևապես, դրանք ավելի կամ պակաս չափով համանման են։ Բայց չի կարելի խոսել, սխալ կլիներ խոսել արտադրության նկատմամբ սպառման առաջնության կամ սպառման նկատմամբ արտադրության առաջնության մասին, որովհետև արտադրությունը և սպառումը ներկայացնում են երկու բոլորովին տարբեր բնագավառներ, ճիշտ է, իրար հետ կապված, բայց, այնուամենայնիվ, տարբեր բնագավառներ։ Ընկ. Յարոշենկոն ըստ երևույթին չի հասկանում, որ խոսքն այստեղ ոչ թե սպառման կամ արտադրության առաջնության մասին է, այլ այն մասին, թե հասարակությունն ինչ նպատակ է դնում հասարակական արտադրության առաջ, թե նա հասարակական արտադրությունը ինչ խնդրի է ենթարկում, ասենք, սոցիալիզմի ժամանակ։ Ուստի հարցին բոլորովին չեն վերաբերում ընկ. Յարոշենկոյի նաև այն խոսակցությունները, թե «սոցիալիստական հասարակության, ինչպես և ամեն մի այլ հասարակության կյանքի հիմքը արտադրությունն է կազմում»։ Ընկ. Յարոշենկոն մոռանում է, որ մարդիկ արտադրում են ոչ թե արտադրելու համար, այլ իրենց պահանջմունքները բավարարելու համար։ Նա մոռանում է, որ արտադրությունը, եթե կտրված լինի հասարակության պահանջմունքների բավարարումից, տկարանում է և կործանվում։

Կարելի՞ է առհասարակ խոսել կապիտալիստական կամ սոցիալիստական արտադրության նպատակի մասին, այն խնդիրների մասին, որոնց ենթարկված է կապիտալիստական կամ սոցիալիստական արտադրությունը։ Ես կարծում եմ, որ կարելի է և պետք է խոսել։

Մարքսն ասում է.

«Կապիտալիստական արտադրության անմիջական նպատակը ոչ թե ապրանքների արտադրությունն է, այլ հավելյալ արժեքի, կամ՝ զարգացած ձևով

շահույթի արտադրությունն է, ոչ թե արդյունքի, այլ հավելյալ արդյունքի արտադրությունը։ Այդ տեսակետից բուն իսկ աշխատանքն արտադրողական է միայն այն չափով, որ չափով նա շահույթ կամ հավելյալ արդյունք է ստեղծում կապիտալի համար։ Քանի դեռ բանվորը չի ստեղծում այդպիսին, նրա աշխատանքն անարտադրողական է։ Հետևաբար, կիրառված արտադրողական աշխատանքի մասսան կապիտալի համար հետաքրքրություն է ներկայացնում միայն այն չափով, որ չափով դրա շնորհիվ— կամ դրան համեմատ— աճում է հավելյալ աշխատանքի քանակը. միայն այդ չափով անհրաժեշտ է այն, ինչը մենք անվանել ենք անհրաժեշտ աշխատաժամանակ։ Քանի դեռ աշխատանքը չի տալիս այդպիսի հետևանք, նա ավելորդ է և պետք է դադարեցվի։

Կապիտալիստական արտադրության նպատակը մշտապես այն է, որ ստեղծի հավելյալ արժեքի մաքսիմում կամ հավելյալ արդյունքի մաքսիմում՝ ավանսավորած կապիտալի մինիմումով. քանի դեռ բանվորների անչափ ծանր աշխատանքով հնարավոր չի լինում հասնել այդպիսի հետևանքի, առաջանում է կապիտալի տենդենցը՝ ձգտելու տվյալ արդյունքն արտադրել ըստ հնարավորին ավելի քիչ ծախսումով,— ձգտելու խնայել աշխատուժն ու ծախքերը...

Այսպիսի ըմբռնման դեպքում բանվորները իրենք ներկայանում են այն, ինչ որ իսկապես նրանք հանդիսանում են կապիտալիստական արտադրության մեջ,— միայն արտադրության միջոցներ, այլ ոչ ինքնանպատակ և ոչ էլ արտադրության նպատակ։ (Տե՛ս «Հավելյալ արժեքի թեորիաները», հատոր II, մաս 2)։

Մարքսի այս խոսքերը նշանակալի են ոչ միայն այն տեսակետից, որ դրանք հակիրճ ու ճշգրիտ որոշում են կապիտալիստական արտադրության նպատակը, այլև այն տեսակետից, որ դրանք ուրվագծում են այն հիմնական նպատակը, այն գլխավոր խնդիրը, որը պետք է դրվի սոցիալիստական արտադրության առջև։

Հետևապես, կապիտալիստական արտադրության նպատակը շահույթներ կորզելն է։ Ինչ վերաբերում է սպառմանը, ապա սա կապիտալիզմին հարկավոր է միայն այն չափով, որչափով ապահովում է շահույթներ կորզելու խնդիրը։ Սպառման հարցը դրանից դուրս կորցնում է իր իմաստը կապիտալիզմի համար։ Մարդը իր պահանջմունքներով չքանում է տեսադաշտից։

Իսկ ո՞րն է սոցիալիստական արտադրության նպատակը, ո՞րն է այն գլխավոր խնդիրը, որի իրականացմանը պետք է ենթարկվի հասարակական արտադրությունը սոցիալիզմի ժամանակ։

Սոցիալիստական արտադրության նպատակը ոչ թե շահույթն է, այլ մարդն իր պահանջմունքներով, այսինքն՝ նրա նյութական և կուլտուրական պահանջների բավարարումը։ Սոցիալիստական արտադրության նպատակը, ինչպես ասված է ընկեր Ստալինի «Դիտողություններ»-ում, «ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովումն է»։

Ընկ. Յարոշենկոն կարծում է, թե ինքն այստեղ գործ ունի սպառման առաջնության» հետ արտադրության նկատմամբ։ Այդ, իհարկե, անմտություն է։ Իրականում մենք այստեղ գործ ունենք ոչ թե սպառման առաջնության հետ, այլ սոցիալիստական արտադրության ենթարկման հետ իր հիմնական նպատակին՝ ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովմանը։

Հետևապես՝ ամբողջ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովում,— սա սոցիալիստական արտադրության ապատակն է, սոցիալիստական արտադրության անընդհատ աճում ու կատարելագործում բարձրագույն տեխնիկայի բազայի վրա,— սա նպատակին հասնելու միջոցն է:

Այս է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքը։

Յանկանալով պահպանել արտադրության այսպես կոչված «առաջնությունը» սպառման նկատմամբ, ընկ. Յարոշենկոն պնդում է, թե «սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքն» է «հասարակության նյութական և կուլտուրական պայմանների արտադրության անընդհատ աճումն ու կատարելագործումը»։ Դա բոլորովին սխալ է։ Ընկ. Յարոշենկոն կոպիտ կերպով խեղաթյուրում է և փչացնում այն ֆորմուլան, որ շարադրված է ընկեր Ստալինի «Դիտողություններ»-ում։ Նրա մոտ արտադրությունը միջոցից դառնում է նպատակ, իսկ հասարակության նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների առավելագույն բավարարման ապահովումը բացառվում է։ Ստացվում է արտադրության աճում արտադրության աճման համար, արտադրություն՝ իբրև ինքնանպատակ, իսկ մարդը իր պահանջմունքներով չքանում է ընկ. Յարոշենկոյի տեսադաշտից։

Ուստի զարմանալի չէ, որ մարդու, որպես սոցիալիստական արտադրության նպատակի, չքանալու հետ մեկտեղ ընկ. Յարոշենկոյի «կոնցեպցիայում» չքանում են մարքսիզմի վերջին մնացորդները։

Այսպիսով ընկ. Յարոշենկոյի մոտ ստացվեց ոչ թե արտադրության «առաջնություն» սպառման նկատմամբ, այլ բուրժուական իդեոլոգիայի «առաջնության» նման ինչ-որ բան մարքսիստական իդեոլոգիայի նկատմամբ։

3. Առանձին խնդիր է վերարտադրության մարքսյան թեորիայի հարցը։ Ընկ. Յարոշենկոն պնդում է, թե վերարտադրության մարքսյան թեորիան միմիայն կապիտալիստական վերարտադրության թեորիա է, թե նա ոչ մի այնպիսի բան չի պարունակում, որը ուժ ունենար հասարակական մյուս ֆորմացիաների համար, այդ թվում սոցիալիստական հասարակական ֆորմացիայի համար։ Նա ասում է.

«Մարքսի վերարտադրության սխեման, որ նա մշակել է կապիտալիստական տնտեսության համար, սոցիալիստական հասարակական արտադրության վրա տեղափոխելը հանդիսանում է Մարքսի ուսմունքի դոգմատիկ ըմբռնման արդյունք և հակասում է նրա ուսմունքի էությանը»։ (Տե՛ս ընկ. Յարոշենկոյի ճառը դիսկուսիայի Պլենումում)։

Նա, այնուհետև, պնդում է, թե «Մարքսի վերարտադրության սխեման չի համապատասխանում սոցիալիստական հասարակության տնտեսական օրենքներին և չի կարող հիմք ծառայել սոցիալիստական վերարտադրության ուսումնասիրության համար»։ (Տե՛ս նույն տեղը)։

Անդրադառնալով պարզ վերարտադրության մարքսյան թեորիային, որտեղ որոշակի հարաբերակցություն է սահմանվում արտադրության միջոցների արտադրության (I ստորաբաժանում) և սպառման միջոցների արտադրության (II ստորաբաժանում) միջև, ընկ. Յարոշենկոն ասում է.

«Սոցիալիստական հասարակության մեջ առաջին և երկրորդ ստորաբաժանումների միջև հարաբերակցությունը չի պայմանավորվում Մարքսի՝ առաջին ստորաբաժանման B+M ֆորմուլայով և երկրորդ ստորաբաժանման C-ով։

Առաջին և երկրորդ ստորաբաժանումների միջև հիշյալ փոխադարձ կապը զարգացման մեջ չպետք է տեղի ունենա սոցիալիզմի պայմաններում»։ (Տե՛ս նույն տեղը)։

Նա պնդում է, թե «I և II ստորաբաժանումների հարաբերակցությունների վերաբերյալ Մարքսի մշակած թեորիան անընդունելի է մեր սոցիալիստական պայմաններում, որովհետև Մարքսի թեորիայի հիմքում դրված է կապիտալիստական տնտեսությունն իր օրենքներով»։ (Տե՛ս ընկ. Յարոշենկոյի նամակը Քաղբյուրոյի անդամներին)։

Այսպես է ընկ. Յարոշենկոն հողմացրիվ անում վերարտադրության մարքսյան թեորիան։

Իհարկե, վերարտադրության մարքսյան թեորիան, որ մշակվել էր կապիտալիստական արտադրության օրենքների ուսումնասիրության հետևանքով, արտացոլում է կապիտալիստական արտադրության սպեցիֆիկան և, բնականաբար, արտահայտված է ապրանքա-կապիտալիստական արժեքային հարաբերությունների ձևով։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Բայց վերարտադրության մարքսյան թեորիայում տեսնել միայն այդ ձևը, և չնկատել այդ թեորիայի հիմունքները, չնկատել նրա հիմնական բովանդակությունը, որն ուժ ունի ոչ միայն կապիտալիստական հասարակական ֆորմացիայի համար,— նշանակում է ոչինչ չհասկանալ այդ թեորիայից։ Եթե ընկ. Յարոշենկոն որևէ բան հասկանար այս հարցում, ապա նա կհասկանար նաև այն ակնհայտ ճշմարտությունը, որ վերարտադրության մարքսյան սխեմաները բնավ չեն սպառվում կապիտալիստական արտադրության սպեցիֆիկայի արտացոլումով, որ դրա հետ մեկտեղ այդ սխեմաները պարունակում են վերարտադրության մի ամբողջ շարք հիմնական դրույթներ, որոնք ուժ ունեն հասարակական բոլոր ֆորմացիաների համար, այդ թվում նաև հատկապես սոցիալիստական հասարակական ֆորմացիայի համար։ Վերարտադրության մարքսյան թեորիայի այնպիսի հիմնական դրույթներ, ինչպես այն դրույթը, որ հասարակական արտադրությունը բաժանվում է արտադրության միջոցների արտադրության և սպառման միջոցների արտադրության, ընդլայնված վերարտադրության ժամանակ արտադրության միջոցների արտադրության առավել աճման դրույթը, I և II ստորաբաժանումների հարաբերակցության դրույթը, հավելյալ արդյունքի՝ որպես կուտակման միակ աղբյուրի դրույթը, հասարակական ֆոնդերի գոյացման և նախանշման դրույթը, կուտակման՝ որպես ընդլայնված վերարտադրության միակ աղբյուրի դրույթը,— վերարտադրության մարքսյան թեորիայի այս բոլոր հիմնական դրույթները հենց այն դրույթներն են, որոնք ուժ ունեն ոչ միայն կապիտալիստական ֆորմացիայի համար և առանց որոնց կիրառման չի կարող կառավարվել և ոչ մի սոցիալիստական հասարակություն՝ ժողովրդական տնտեսությունը պլանավորելիս։ Բնորոշ է, որ ինքը՝ ընկ. Յարոշենկոն, որ այդպես մեծամտորեն քրթմնջում է մարքսյան «վերարտադրության սխեմաների» վրա, սոցիալիստական վերարտադրության հարցերը քննարկելիս հարկադրված է ամեն քայլափոխում դիմել այդ «սխեմաների» օգնությանը։

Իսկ ինչպե՞ս էին նայում այդ բանին Լենինը, Մարքսը։

Բոլորին հայտնի է Լենինի քննադատական դիտողությունները Բուխարինի «Անցման ժամանակաշրջանի էկոնոմիկան» գրքի վերաբերյալ։ Այդ դիտողություններում Լենինը, ինչպես հայտնի է, ընդունել է, որ I և II ստորաբա-

ժանումների միջև հարաբերակցության մարքսյան ֆորմուլան, որի դեմ արշավանքի է դուրս գալիս ընկ. Յարոշենկոն, ուժի մեջ է մնում ինչպես սոցիալիզմի համար, այնպես էլ «մաքուր կոմունիզմի» համար, այսինքն՝ կոմունիզմի երկրորդ փուլի համար։

Ինչ վերաբերում է Մարքսին, ապա նա, ինչպես հայտնի է, չէր՝ սիրում շեղվել կապիտալիստական արտադրության օրենքների ուսումնասիրությունից և իր «Կապիտալ»-ում չի զբաղվել վերարտադրության իր սխեմաների՝ սոցիալիզմի նկատմամբ կիրառելիության հարցով։ Սակայն «Կապիտալ»-ի II հատորի 20-րդ գլխում, «I ստորաբաժանման հաստատուն կապիտալը» հատվածում, որտեղ նա խոսում է I ստորաբաժանման ներսում այդ ստորաբաժանման արժեքների փոխանակության մասին, Մարքսը ասես հարևանցիորեն նկատում է, որ այդ ստորաբաժանման մեջ արդյունքների փոխանակությունը սոցիալիզմի ժամանակ կընթանար նույնպիսի մշտականությամբ, ինչպես կապիտալիստական արտադրության ժամանակ։ Մարքսն ասում է.

«Եթե արտադրությունը լիներ հանրային և ոչ թե կապիտալիստական, ապա պարզ է, որ I ստորաբաժանման արդյունքները ոչ պակաս մշտականությամբ վերարտադրության նպատակով կբաշխվեին նույն ստորաբաժանման արտադրաճյուղերի միջև որպես արտադրության միջոցներ. մի մասը անմիջականորեն կմնար արտադրության այն ոլորտում, որտեղից նա դուրս էր եկել։ Իբրև արդյունք, մյուս մասը, ընդհակառակը, կանցներ այլ արտադրավայրեր, և այդպիսով՝ հակառակ ուղղությամբ կատարվող մի մշտական շարժում տեղի կունենար այդ ստորաբաժանման տարբեր արտադրավայրերի միջև» (տե՛ս Մարքս, «Կապիտալ», հ. II, 8-րդ հրատ., էջ 307)։

Հետևապես, Մարքսն ամենևին չէր գտնում, թե վերարտադրության իր թեորիան ուժ ունի միմիայն կապիտալիստական արտադրության համար, թեև նա հենց կապիտալիստական արտադրության օրենքների հետազոտությամբ էր զբաղվում։ Նա, ընդհակառակը, ինչպես երևում է, ելնում էր այն բանից, որ վերարտադրության իր թեորիան կարող է ուժ ունենալ նաև սոցիալիստական արտադրության համար։

Պետք է նշել, որ Մարքսը «Գոթայի ծրագրի քննադատության» մեջ սոցիալիզմի և դեպի կոմունիզմ անցման ժամանակաշրջանի էկոնոմիկան վերլուծելիս ելնում է վերարտադրության իր թեորիայի հիմնական դրույթներից, ակներևորեն դրանք պարտադիր համարելով կոմունիստական հասարակարգի համար։

Պետք է նշել նաև, որ Էնգելսը իր «Անտի-Դյուրինգ»-ում, քննադատելով Դյուրինգի «սոցիալիտար սիստեմը» և բնութագրելով սոցիալիստական հասարակարգի էկոնոմիկան, նույնպես ելնում է Մարքսի վերարտադրության թեորիայի հիմնական դրույթներից, դրանք պարտադիր համարելով կոմունիստական հասարակարգի համար։

Այս են փաստերը։

Ստացվում է, որ այստեղ ևս՝ վերարտադրության հարցում ընկ. Յարոշենկոն, չնայած իր սանձարձակ տոնին Մարքսի «սխեմաների» նկատմամբ, նորից ծանծաղուտի մեջ խրվեց։

4. Քաղբյուրոյի անդամներին հասցեագրած իր նամակը ընկ. Յարոշենկոն վերջացնում է այսպիսի առաջարկությամբ՝ իրեն հանձնարարել «Սոցիալիզմի քաղաքատնտեսություն» կազմելը։ Նա գրում է.

«Ելնելով սոցիալիզմի քաղաքատնտեսության գիտության առարկայի սահմանումից, որ ես շարադրել եմ պլենար նիստում, սեկցիայում և ներկա նամակում, օգտագործելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդը, ես կարող եմ մեկ տարվա, ոչ ավելի մեկ ու կես տարվա ընթացքում, երկու մարդու օգնությամբ, մշակել սոցիալիզմի քաղաքատնտեսության հիմնական հարցերի թեորիական որոշումները, շարադրել սոցիալիզմի քաղաքատնտեսության մարքսիստական, լենինյան-ստալինյան թեորիան, մի թեորիա, որն այդ գիտությունը կդարձնի կոմունիզմի համար ժողովրդի պայքարի հատու գործիք»։

Չի կարելի շխոստովանել, որ ընկ. Յարոշենկոն համեստությամբ չի տառապում։ Դեռ ավելին, օգտվելով որոշ գրականագետների ոճից, կարելի է ասել «նույնիսկ բոլորովին ընդհակառակը»։

Վերևում արդեն ասվեց, որ ընկ. Յարոշենկոն սոցիալիզմի քաղաքատնտեսությունը շփոթում է ղեկավար օրգանների տնտեսական քաղաքականության հետ։ Այն, ինչ որ նա սոցիալիզմի քաղաքատնտեսության առարկա է համարում— արտադրողական ուժերի ռացիոնալ կազմակերպումը, ժողովրդական տնտեսության պլանավորումը, հասարակական ֆոնդեր կազմելը և այլն— ոչ թե սոցիալիզմի քաղաքատնտեսության առարկան է, այլ ղեկավար օրգանների տնտեսական քաղաքականության առարկան։

Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ ընկ. Յարոշենկոյի թույլ տված լուրջ սխալները և նրա ոչ-մարքսիստական «տեսակետը» չեն տրամադրում, որ ընկ. Յարոշենկոյին այդպիսի մի հանձնարարություն տրվի։

* * *

Հետևություններ՝

1) Ընկ. Յարոշենկոյի գանգատը դիսկուսիայի ղեկավարների դեմ դուրկ է իմաստից, որովհետև դիսկուսիայի ղեկավարները, լինելով մարքսիստներ, չէին կարող իրենց ընդհանրացնող փաստաթղթերում արտացոլել ընկ. Յարոշենկոյի ոչ-մարքսիստական «տեսակետը».

2) Ընկ. Յարոշենկոյի խնդրանքը՝ իրեն հանձնարարել գրելու Սոցիալիզմի քաղաքատնտեսությունը,— չի կարելի լուրջ համարել, թեկուզ հենց այն պատճառով, որ դրանից խլեստակովշչինայի հոտ է փչում։

Ի. ՍՏԱԼԻՆ

22 մայիսի 1952 թ.

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ Ա. Վ. ՍԱՆԻՆԱՅԻՆ ԵՎ Վ. Գ. ՎԵՆԺԵՐԻՆ

Ես ստացել եմ ձեր նամակները։ Ինչպես երևում է, այդ նամակների հեղինակները խորապես և լրջորեն ուսումնասիրում են մեր երկրի էկոնոմիկայի պրոբլեմները։ Նամակներում քիչ չեն ճիշտ ձևակերպումները և հետաքրքրական խորհրդածությունները։ Սակայն դրա հետ միասին այնտեղ կան նաև մի բանի լուրջ թեորիական սխալներ։ Ներկա պատասխանում ես մտադիր եմ կանգ առնել հատկապես այդ սխալների վրա։